

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ի Ն Ե Ր

Դեկտ. 28-ին, Վեհափառ Թագաւորի արաստեմանէն վերադարձին առքիւ, Ս. Արուստյա Ընդհ. Գործոց Վարիչ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. հետեւեալ խնդակցութեան հեռագիրը տուաւ :—

«Յանուն իմ, եւ յանուն Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Յորդանանու Հայց. եկեղեցւոյ եւ Հայ համայնքի զաւակներուն, կր շնորհաւորեմ Ձերդ Վեհափառութիւնը ի Յորդանան Ձեր ապանով վերադարձին առիքով, եւ կր հայցեմ Ամենակալ Աստուծմէ պահել Ձերդ Վեհափառութիւնը ազգին եւ հայրենիքին համար » :



Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., յանուն իրեն, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Յորդանանու Հայ համայնքին շնորհաւորական հեռագիրներ ղրկեց հետեւեալ պետական բարձրաստիճան անձանց, անոնց աստիճանի բարձրացման կամ պետական յատուկ շնանշանով պատուուած ըլլալուն առիքով :

Ն. Ա. Բ. Գանժաւանց իշխանին՝ անոր Զօրավարութեան աստիճանի բարձրանալուն առքիւ :

Ն. Բ. Շէրիժ Ազատկ Համիտ Հայմակի, Ասդկարգի շնանշան տանալուն առքիւ :

Ն. Վ. Վարչապետ Հազա՝ ա Մանալիի, Ոստիկանութեան Ընդհ. Պետ. Պահնաք Թաղմունցի, Ներքին Գործոց Նախարար Ռասմի Միրզայի, երկրագործական Նա-

նեմակ ծածկոցներ, մին Ս. Աստուածածնայ Տաճարին, միւսը՝ Ս. Յակոբայ համար :

38. — Երուսաղէմէն Տիկ. Զապէլ Երկաթեան, մէկ Աւագ Սեղանի ներմակ ձեռագործ ծածկոց :

39. — Երուսաղէմէն Տիկին Էլիզ Մովսէսան, մէկ ականազարդ ոսկի մատանի Գեղեցիկ Աստուածամօր նկարին :

40. — Կ. Պոստէն Աննա Պետրեան, մէկ սեղանի ձեռագործ ծածկոց Ս. Գլխադրին :

41. — Աղեքսանդրիայէն Տիկ. Իւզաբեր Բամպուկեան, երկու զանգելա Ս. Սեղանի ծածկոց Ս. Գլխադրին :

42. — Աղեքսանդրիայէն Տիկ. Պրաթրիս Խուսկանեան, մէկ ասեղնագործ Ս. Սեղանի ծածկոց Ս. Գլխադրին :

43. — Երուսաղէմէն Տիկին Ուսաննա Վարդերեսեան, մէկ ձեռագործ կորբուրայ Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին :

Լուսարարայէն Ս. Արուստյա ՇՆՈՐՀՔ ԵՊՍ. ԳԱՍՈՒՍՏԵԱՆ

խաւար Ազգէ Ճապէզի, Ն. Վ. Սամիր Ռիճայիի Նեւալոյսի նախագան նշանակուած ըլլալուն առքիւ, Հանրային Շինութեան Նախարար Եազուպ Մուսամարի, Հաղորդակցութեան եւ Արշարութեան Նախարար Անվար Նեւեհայիի՝ պետական յատուկ շնանշաններով պատուուած ըլլալուն առքիւ :

Աստուծմէ ստացուեցան փոխադարձ շնորհակալութեան յատուկ հեռագիրներ :



Ե Կ Ե Վ Ե Տ Ա Կ Ա Ն Ք - Բ Ե Մ Ա Կ Ա Ն Ք

● Կիր. 1 Նոյեմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, ուր քարոզեց Հոգշ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան, համառօտակի խօսելով մեղքերու տեսակներուն եւ անոնց իւրաքանչիւրին քանդիչ եւ ազականիչ յատուկութիւններուն մասին :

● Բշ. 2 Նոյեմ. — Ս. Յովսէփայ Աստուածամօր տունին առթիւ, Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթեմանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի զերեզմանին վրայ. Ըստ սովորութեան, պատարագիչն էր Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան :

● Շր. 7 Նոյեմ. — Կէսօրէ վերջ, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. զլիսաւորութեամբ, Միաբանութեանը «Հրաշափառառով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, Ս. Գերեզմանին եւ Գիւտ Խաչի այրի ուխտերէն ետք, թափօրը բարձրացաւ վերջնայս կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի հայապատկան եկեղեցին՝ ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատունակը, Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս : Հանդիսապետն էր Հոգշ. Տ. Ներսէս Վրդ. Բապուճեան :

● Կիր. 8 Նոյեմ. — Գիւտ Խաչ : Գրեթային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան եւ հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Լուսաւորիչ ժամաբարն էր Հոգշ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան : Ապա կատարուեցաւ ետագործ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղւոյն շուրջ, նախադահութեամբ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. յոր, ամպհովանի ներքեւ, Կենաց Փայտի ճանաչազեղ մատուցն ի ձեռին, կ'օրհնէր Տաճարը խննուած հոծ բազմութիւնն ու Ս. Թարգմանչաց Երկրդ. Վարժարանի երկսեռ աշակերտութիւնը Ս. Գերեզմանի դրան երգուեցան «Տէր ողորմեա» եւ «Խաչի քո Քրիստոս» : Թափօրը վերջացաւ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ՝ երբ զրեթէ կէսօր էր :

● Կիր. 15 Նոյեմ. — Չեռնաղբութիւն կուսակրօն Քահանայի (Տես էջ 283) :

● Ուր. 20 Նոյեմ. — Ս. Հրեշտակապետաց տունին նախատունակը պաշտուեցաւ համանուն եկեղեցւոյ մէջ : Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. : Նախատունակն ետք կատարուե-

ցաւ Դպրութեան չորս աստիճաններու տըջու-
թիւն ժառնգ. վարժարանի Բ և Գ դասարաննե-
րու ութ սաներուն, որոնք ցարդ չէին ստացած
այդ աստիճանները:

● Շր. 21 Նոյեմ. — Տօն Ս. Լըբեսկապեցոսցի:
Առաւօտեան ժամերգութիւնը պաշտօնեցաւ և Ս.
Պատարագը մատուցուեցաւ Ս. Լըբշտակապետաց
եկեղեցոյ մէջ: Ժամարարն էր Լոզշ. Տ. Լայկա-
սեր վրդ.: Ս. Պատարագէն ետք, ըստ ընկալելի
սովորութեան, կատարուեցաւ հոգեհանգստեան
հանդիսաւոր պաշտօն՝ Ս. Աթոռոյ Բարեբարունի
Աղանի ձէլփաներուն և իր ընտանեկան պա-
րագաներու հոգիներուն համար: Ապա Միարա-
նութիւնը պատուասիրուեցաւ վանուց Տեսչա-
րանին մէջ՝ առժմ. Տեսուչ Լոզշ. Տ. Անուշաւան
վրդ. Զղջանեանի կողմէ:

● Կիր. 22 Նոյեմ. — Ս. Պատարագը մատուց-
ուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամասրան
մէջ, ուր քարոզեց Լոզշ. Տ. Ներսէս վրդ., բնա-
րան ունենալով օրուան ծաշու Աւետարանէն
Յիսուսի ժողովրդապետ Յայրօսի ուղղած խօսքը՝
«Մի՛ երկնչիր, բայց միայն հաւատա՛» (Մրկ. Ե.
36), ու խօսեցաւ հաւատքի քրիստոնեայ անհատի
կեանքէն ներս ունեցած կենսական դերի մասին,
յայտնելով նաև թէ հաւատքը պէտք չէ որ վե-
րացական ինչ մը թուի անոր, այլ ներգործող
ոյժ մը ու ապրուած իրողութիւն մը. անհաւատը
չի կրնար հոգեկան խաղաղութեան տիրանալ ու
քրիստոնէական համարտութիւններուն մօտենալ:

● Կիր. 29 Նոյեմ. — Բարեկ. Յիսուսի պահնգ:
Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, ուր
քարոզեց Տ. Վաղդէն վրդ., ծանրանալով
Քրիստոսի այն խօսքին վրայ թէ «Որ ոչն է ընդ
մեզ հակառակ, ի մեր կոյս է» (Մրկ., Թ., 39),
ու յայտնելով թէ որքան ծանրակշիռ մեղք է
արգելք հանդիսանալ այոց բարի գործերուն:

● Եշ. 3 Դեկտ. — Ընծայման տօնի հանդի-
սաւոր նախատունակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ:
Լանդիսապետն էր Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.:

● Աւր. 4 Դեկտ. — Ընծայման Ս. Աստուածա-
ծնի: Առաւօտուն, Գերշ. Տ. Նորայր Եպս. ի զլիսա-
ւորութեամբ, Միարան Լայրեր իջան Գեթեմանի
ձորը ու քիչ ետք «Լրաշափառ»-ով մուտք գործե-
ցին Ս. Աստուածածնայ Տաճար՝ ուր Տիրամօր Ս.
Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պա-
տարագը մատուցեց և աւուր պատշաճի քարոզ մը
խօսեցաւ Գերշ. Լանդիսապետ Սրբազանը, և Ս.
Պատարագէն ետք նախագահեց Ս. Աթոռոյ և
աղգիս բարեբար կիւլլապի կիւլլապէնկեանի և իր
համայն զերդաստանի ննջեցեցեց հոգիներուն հա-
մար կատարուած տարեկան հոգեհանգստեան հան-
դիսաւոր պաշտամունքին:

● Կիր. 6 Դեկտ. — Ս. Պատարագը մատուց-
ուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամասրան
մէջ, ուր քարոզեց Լոզշ. Տ. Յովսէփ վրդ. Մա-
մուր՝ բնարան ունենալով օրուան ծաշու Աւետա-
րանէն «Ինչորեքէք նախ դարձայութիւն Աստու-
ծոյ» (Ղկտ., ԺԲ., 31), յայտնելով թէ բոլոր բա-
րիքները կը կայանան այս խնդրանքին գոհա-
ցումին մէջ:

● Շր. 12 Դեկտ. — Ս. Թաղէտի եւ Բարդղու-
մէտի առաքելոց՝ առաջին Լուսաւորչացն Լայց. Ս.
Եկեղեցոյ: Երէկ՝ նախատունակը պաշտուած էր ի
Ս. Յակոբ Այսոր՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին
վրայ իր անդրանիկ Ս. Պատարագը մատուց Նոր-
ընծայ Լոզշ. Տ. Յուսիկ Արդ. Պաղտասեան:

● Կիր. 13 Դեկտ. — Ս. Պատարագը մատուց-
ուեցաւ ի Ս. Յակոբ, Աւագ Սեղանին վրայ: Պա-
տարագեց նորընծայ Տ. Յուսիկ Արեղայի ուսու-
ցիչն ու վարժիչը՝ Լոզշ. Տ. Դաւիթ Արեղայ Սա-
հակեան: Քարոզեց Գերշ. Տ. Շնորհք Եպս., նիւթ
ոււնենալով օրուան ծաշու Աւետարանէն թեյա-
դրուած ապաշխարութեան խորհուրդը: Ըսու թէ
Յիսնակի շրջանն ալ, Մեծ Պահոց օրերուն նման,
պատեն առիթ մըն է ապաշխարանքի: Ս. Պատա-
րագի արարողութիւնը, ժամ մը տեսողութեամբ,
ձայնափութեցաւ Յորդանանի Ռատիօկայանէն:

● Եշ. 17 Դեկտ. — Ս. Լարցն Եկիպսացոց Մայր
Տաճարի Ս. Մակարայ մատրան մէջ: Ժամարարն
էր, ըստ սովորութեան, Խոստովանահայր Լոզշ.
Տ. Մաշտոց վրդ. Բարխուսեան:

● Կիր. 20 Դեկտ. — Ս. Պատարագը մատուց-
ուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամասրան
մէջ: Պատարագեց Լայքայի Լոպեօր Լովի Լոզշ.
Տ. Սնան Արդ. Գապագեան: Քարոզեց Գերշ. Տ.
Շնորհք Եպս., «Ի ոչ ոք յայնց կուցեցեց ա-
շակեցէ լընթրեաց իմոց» (Ղկտ. ԺԳ. 24) բնա-
բանով, մեկնարանելով օրուան ծաշու Աւետա-
րանէն կոնատէրի առակը, ու յայտնելով թէ
նմանօրինակ կոչ մը ուղղուած է բոլորիս, բայց
զանազան աշխարհիկ նկատումներ պատճառ կ'ըլ-
լան որ շընդառաջներ անոր ու զրկենք մենք
զմեզ «երկնքի արքայութեան մէջ ճաշ ուտելու»
երանութեանէն:

● Բշ. 21 Դեկտ. — Յղութեան տօնի հանդի-
սաւոր նախատունակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ:
Լանդիսապետն էր Գերշ. Տ. Շնորհք Եպս.:

● Գշ. 22 Դեկտ. — Յղութիւն Ս. Աստուածածնի:
Առաւօտուն, Գերշ. Տ. Շնորհք Եպս. ի զլիսաւո-
րութեամբ, Միարան Լայրեր իջան Գեթեմանի
ձորը ու քիչ ետք «Լրաշափառ»-ով մուտք գործե-
ցին Ս. Աստուածածնայ Տաճար՝ ուր Տիրամօր Ս.
Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պա-
տարագը մատուցեց Գերշ. Լանդիսապետ Սրբազանը:

● Շր. 26 Դեկտ. — Ս. Յակոբայ Մըքնայ հայ-
րապետի: Երէկ՝ նախատունակը պաշտուած էր ի
Ս. Յակոբ Այսոր՝ Ս. Պատարագը մատուցուեցաւ
Մայր Տաճարի Ս. Դիսազրի մատրան մէջ:

● Կիր. 27 Դեկտ. — Ս. Պատարագը մատուց-
ուեցաւ Մայր Տաճարին մէջ, ուր քարոզեց Գերշ.
Տ. Նորայր Եպս., նիւթ ունենալով օրուան ծա-
շու Աւետարանի ընթերցումը ու ծանրանալով
«Մտառայք անպիտանք եմք, զոր պարտէաքն առ-
նել՝ արարաք» խօսքին վրայ: Ըսու թէ բոլորս
ալ ծառաներ ենք քրիստոնէական կրօնի անտե-
սութեան մէջ, ու իբր այդ՝ մեզմէ կը սպասուի
ըլլալ ծառայաւէր, խոնրեմ ու ննազանդ. առա-
քինութիւններ՝ որոնք իրենց զերագոյն լրումին
հասան Քրիստոսի իսկ անձին վրայ:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Ուր. 30 Հոկտ. — Առաւօտեան ժամը 10ին, Մէյճըր - ձէնէրալ Բարիմ Պէյ Օհան այցելեց Պատրիարքարան, ի փոխադարձութիւն Պատրիարքարանիս շնորհաւորութեան՝ իր աստիճանի բարձրացման առթիւ:

● Գշ. 3 Նոյեմ. — Առաւօտեան ժամը 10ին, Ն. Վ. Իրանի Շահի և Ն. Վ. Հիւսէյն Թագաւորի Ս. Քաղաքս այցելութեան բարեբաստիկ առիթով, քաղաքիս սղակայանը դիմաւորութեան գացին Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. և Գերշ. Տ. Շնորհք Եպս. , ընկերակցութեամբ Աւագ-Թարգման Հոգշ. Տ. Վազգէն Վրդ. Գրպրբալեանի:

— Նոյն առիթով, կէսօրուան ժամը 1ին, Քաղաքիս վանք. Կառավարչի հրաւերին ընդառաջելով, Աւագաստօր պանդոկի մէջ արուած մեծ ճակերոյթին ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. և Գերշ. Տ. Շնորհք Եպս.:

— Նոյն առիթով, երեկոյեան, Ն. Վանք. վարչապետին և իր տիկնոջ հրաւերին ընդառաջելով, Զարքայի սպայակոյտի ակումբին մէջ արուած մեծ ընթերթին ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Քէմհանեան, ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Վազգէն Վրդ. և Ամանի Հայ Համայնքի Հովիտ Հոգշ. Տ. Արիս Արեղայի:

● Գշ. 4 Նոյեմ. — Նոյն առիթով, առաւօտեան ժամը 10ին, Պաշտպանութեան նախարարի հրաւերին ընդառաջելով, իսառի մէջ կատարուած դիմաւորական մեծ տողանցքին ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Վազգէն Վրդ.:

— Նոյն առիթով, կէսօրէ վերջ ժամը 4ին, Զինուորական Բնդհանուր Հրամանատարի հրաւերին ընդառաջելով, Զինուորական Ազատախիչին մէջ արուած թէյասեղանին ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Վազգէն Վրդ.:

Ն. Վեհ. Իրանի Շահի Երզնան գտնուած բոլոր ժամանակամիջոցին, Վանքի աւագ դուռը զարդարուած էր զբոյսակներով և ելիքարական լոյսերով. իսկ Գեթեմանի ձորի մեր պարտէզի ճամբու երկայնքին զետեղուած էր յաղթական կամար մը՝ ի պատիւ Ն. Վ. Հիւսէյն Թագաւորին և Ն. Վ. Իրանի Շահին: — Գշ. 3 Նոյեմ. ի կէսօրէ վերջ, Ս. Թարգմանչաց վարժարանի երկեստ աշակերտութիւնը յաղթական կամարին երկու կողմերը շարուած էին բարեկալուստ մաղթելու երկու մեծ վեհապետներու:

● Շր. 14 Նոյեմ. — Կէսօրէ վերջ ժամը 4ին, Ն. Վեհ. Հիւսէյն Թագաւորի ծննդեան 25րդ տարեկան առիթով, Հարամ Շէրիֆի մեծաւորին կողմէ արուած թէյասեղանին ներկայ եղան Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. և Հոգշ. Տ. Գաւրի Արղ.:

● Կիր. 22 Նոյեմ. — Երեկոյեան, Լիբանանի անկախութեան 16րդ տարեկարծին առիթով, քաղաքիս Լիբանանեան Բնդհ. Հիւպատոսի և իր

տիկնոջ հրաւերին ընդառաջելով, Հիւպատոսարանի տան մէջ սարքուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., Հոգշ. Տ. Վազգէն Վրդ. և Տիար Կարպիս Հինդեան:

● Գշ. 24 Նոյեմ. — Իրիկուան ժամը 5ին, Կ. Պոլսոյ Յունաց Տիեզերական Պատրիարք Ամեն. Տ. Աթենակորասի Ս. Քաղաք այցելութեան առիթով և քաղաքիս Յունաց Ամեն. Ս. Պատրիարքի հրաւերին ընդառաջելով, Յոպպէի գրան առջև, յանուն Պատրիարքարանիս, դիմաւորութեան գացին Գերշ. Տ. Շնորհք Եպս. և Հոգշ. Տ. Վազգէն Վրդ.՝ որոնք յետոյ ներկայ գտնուեցան Ս. Երուսաղէմի Տաճարին մէջ կատարուած Գոհարանահան Մաղթանքին և անոր յաջորդող Յունաց Պատրիարքարանի մէջ եղած հիւրասիրութեան:

● Գշ. 25 Նոյեմ. — Նոյն առիթով, Ս. Աթոռոյս Միարանութեան խումբ մը, զիմաւորութեամբ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. ի, բարեկալուստի գնաց Յունաց Տիեզերական Պատրիարքին՝ Յունաց Պատրիարքարան:

● Ուր. 27 Նոյեմ. — Նոյն առիթով, քաղաքիս Յունաց Ս. Պատրիարքի հրաւերին ընդառաջելով, Համարձման լեռան իրենց Գալիլիոյ վանքին մէջ արուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., Հոգշ. Տ. Տ. Հայկասեր և Վազգէն Վրդ.ներ և Տիար Կ. Հինդեան:

● Բշ. 30 Նոյեմ. — Կ. Վ. ժամը 4ին, յանուն Կ. Պոլսոյ Յունաց Տիեզերական Պատրիարքին, Ֆիլատելիֆի Եպս. Գերշ. Եպիօպոստ և յանուն Քաղաքիս Յունաց Ամեն. Ս. Պատրիարքին Գերշ. Տ. Ստեփանոս Եպս. պաշտօնապէս փոխադարձ այցելութիւն տուին Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. ի և շնորհակալութիւն յայտնեցին Յունաց Պոլսոյ Պատրիարքին քաղաքս այցելութեան առիթով Պատրիարքարանիս ցոյց տուած սիրալիր ընդունելութեան և վերաբերմունքին համար:

● Ուր. 11 Դեկտ. — Ընդառաջելով քաղաքիս Արար-Անկիլիքան Եպս. Գերշ. Նէճրպ Գուպէյի հրաւերին, Աէնթ ձորս եկեղեցոյ մէջ կատարուած քահանայական ձեռնադրութեան ներկայ գտնուեցան Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ.:

● Գշ. 16 Դեկտ. — Կ. Վ. ժամը 3ին, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., Հոգշ. Տ. Տ. Հայկասեր և Վազգէն Վրդ. և Տիար Կ. Հինդեան այցելութիւն տուին քաղաքիս նոր Նշանակուած Զինուորական Հրամանատարին:

● Եշ. 17 Դեկտ. — Առողջապահական գրասենեակի բժշկապետի հրաւերին ընդառաջելով, Հոգշ. Տ. Տ. Թորգոմ և Վազգէն Վրդ. և Տիար Կ. Հինդեան քաղաքիս մէջ Արեան կեդրոնի վերաբացման՝ Օմարիէի զարոյթին մէջ:

● Ուր. 18 Դեկտ. — Կ. ա. ժամը 9.30ին, Ս. Աթոռ ժամանեցին Տէր և Տկ. Ռոպէրթ Կիւլպէնիկան պատուական հիւրերը: Սղակայան դիմաւորութեան զացած էին Հոգշ. Տ. Թորգոմ Վրդ. և Տիար Կ. Հինդեան: Հիւրացող պատեցան Տնօրինական Սրբալոյսերը և Մայրականքը և յաջորդ օրը կէսօրին մեկնեցան Լիբանան:

● Շր. 26 Դեկտ. — Եւրոպացւոց Ս. Ծննդեան

տունին առիթով, Գերշ. Տ. Սուրեն Արքեպիսկոպիտի գլխավորությամբ, Միաբանությունը շնորհաբարություններով և անհատական օգնությամբ Գերշ. Գրիգորյանին, Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքին, Պապական Նախարարին, Անգլիկոսական երկու Գերշ. Եպիսկոպոսներին, Լիբանանյան Բնիկ. Հիպատոսին, Իսկ ուրիշ խումբ մը, Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. զլխավորությամբ, այցելեց Յոյն և Հայ Կաթոլիկ Մեծաբաններուն և Լուսաբանականներու երէցին:

● Բշ. 28 Դեկտ. — Կ. Վ. ժամը 3ին, ընդունալով Վեհա. Ներքին Գործոց Նախարարի հրահանգները, Նորին Վեհափառութիւնը Հիւսէյն Թաղաւորին Եւրոպայ կատարած շրջագայութենէն Արքեպիսկոպիտի Գերշ. Տ. Սուրեն Արքեպ. և Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ.:



Չ Ե Ռ Ն Ա Կ Ի Ր Ա Ի Թ Ի Ի Ն

Շարաթ, 14 Նոյեմբերի երեկոյան ժամերգութենէն ետք, Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ Ս. Աթոռոյս Ընծայարանի ուսանողներէն Տրց. Սարգիս Արք. Պաղատանի քահանայական կոյճան սրտագրաւ արարողութիւնը, Ընծայեալը, առաջնորդութեամբ Լուսաբարապետ Տ. Ծնործք Եպ. Ի՛ որ կը կատարէր Խարտաւիպիկ պաշտօնը, ձեռնադիր յառաջացաւ եկեղեցւոյ մուտքէն մինչև Ատան՝ ուր եպիսկոպոսական զգեստաւորմամբ բազմած էր Չեանազրիչ Գերշ. Տ. Սուրեն Արքեպ. և Խարտաւիպիկ Սրբազանը ի զմայ ժողովրդեան և համաձայն Հայց. եկեղեցւոյ Չեանազրուած Մատուցի տրամադրութեանց, զրապէս պատասխանեց Չեանազրիչ Սրբազանին ընծայեալին վարք ու բարքին, ուսման, կոյճան և ծառայութեան օգրի ու նուիրումի մասին ըրած հարցումներուն: Ապա ընծայեալը հրաւիրուեցաւ հրաժարելու ներձուածողներէն և աշակերտելու Ս. եկեղեցւոյ ուղղափառ հայրապետներուն ու վարդապետներուն: Անկէ ետք ընծայեալը մեղմիւ արտասանեց հաւատոյ ուղղափառ դաւանութեան բանաձևը:

Յաջորդ օր, 15 Նոյեմ. Կիրակի, Նոյն եկեղեցւոյ մէջ պատարագին էր Գերշ. Տ. Սուրեն Արքեպ., որ ձաշու գրքէն առաջ կատարեց առաջին մասը Չեանազրուած խորհուրդին: Այս մասին մէջ ամենէն յուզիչ պահն է երբ ընծայեալը Աւագ Սեղանի բնիկ, ձեռնադիր և ձեռամբարձ կը զանայ ժողովուրդին՝ ի նշան աշխարհէ հրաժարման, մինչ կ'երգուի «Աստուածային և երկնաւոր շնորհ» շարականը՝ որուն զպիւրներ, յանուն ժողովուրդին, կը պատասխանեն. «արժանի է»: Ապա կը զրուի սարկաւազական ուրարը իր վզին՝ իրրև Լուծ Քրիստոսի:

Չեանազրուած երկրորդ և բուն մասը կը սկսի «Ողջունէն առաջ, երբ ընծայեալը կրկին ձեռնադիր կը ներկայանայ Չեանազրիչ Ս. Հոր արմէ կը ստանայ փրկուն, սաղաւարտ, շուրջառ և

պատարագի զգեստաւորման յատուկ այլ մասեր՝ տըշուածան ուրոյն աղօթքներով: Ապա Ս. Սեղանը կը վարագուրուի, մինչ զպիւրները սկսին «Խորհուրդ խորին» երգել, Խարտաւիպիկ Սրբազանը կը բերէ Ս. Միւսունի սպասը քաջափ սեղանէն: Չեանազրեալը Ս. Միւսունով օժեպու նուիրական պահն է արդէն:

Չեանազրիչ Սրբազան Հայրը Ս. Միւսունով կ'օժէ նախան ու զոյգ փերբը ընծայեալին՝ վերակոչելով զայն Տ. Յուսիկ կուսակոծ Քահանայ, ու ապա կը յանձնէ իրեն Ս. Սկի՛ը՝ իրաւասութիւն տալով այսկերպ Ս. Պատարագի խորհուրդը կատարելու: Նորընծան կուտայ ժողովուրդին իր անզրանիկ խաղաղութիւնը: Ապա Ս. Պատարագը կ'առնէ իր ընդատեալ ընթացքը և սարկաւազը Ս. Սեղանէն եկող ողջոյնը կուտայ ամենէն առաջ Նորընծային, և ապա Չեանազրիչ Սրբազանէն սկսեալ բոլոր եկեղեցական զարք կը մտնենայ Նորընծային և կ'ողջագուրէ անոր օժեպու աջն ու նախատը: Նոյնը կ'ընէ ժողովուրդը Ս. Պատարագի աւարտին:

Նոյն օրը երեկոյան ժամերգութենէն ետք, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Ս. Գլխազրի մատարան առջև, Գերշ. Տ. Սուրեն Արքեպ. կատարեց նորընծային վեղարի տըշուածան կարգը: Երկարաշունչ աղօթքներու ընթերցումէն և Ս. Անտուն անապատականի նուիրում շարականներու երգեցողութենէն ետք Սրբազանը հանց սարկաւազական շրջանը նորընծային գլխէն և շնորհագրեց զայն կուսակրտուածան խորհրդանիշը եղող վեղարով: Այս առթիւ, ժառ. Վարժարանի և Ընծայարանի Տեսուչ Հոգշ. Տ. Թորոզմ Վրդ. Մանուկեան, Չեանազրիչ Ս. Հոր հրահանգով, յորդորական մը խօսեցան նորընծային՝ յայտնելով թէ եկեղեցականութիւնը սովորաբար կարծուածին չափ զիրին ստուարեղ մը չէ, մանաւանդ մեր օրերուն ու մեր եկեղեցւոյ մէջ՝ ուր հոգեորականէն կը պահանջուի իր ոյժերուն լաւագոյնը տրամադրել՝ Հայց. եկեղեցւոյ բազմազրիմ և աղաղակող կարիքներուն ի սպաս:

Նորընծան ապա առաջնորդուեցաւ Ս. Յարութեան Տաճար ուր անցուց չորս շարաթներու ուսանելով Ս. Պատարագի կարգերը՝ Հոգշ. Տ. Գաւրիթ Արք. Սահակեանի առաջնորդութեան տակ:

Ստորի կուտանք Նորընծային համառօտ կենսագրականը. —

Հոգշ. Տ. Յուսիկ Արքեպ. Պաղատան ձեռնած է Փրօլիտէնս (Միացեալ Նահանգներ) 1934ին: Աւարտած է ձեռնադարձի բարձրագոյն վարժարանը: Երուսաղէմ եկած և իրրև մասնաւոր ուսանող ընդունուած է ժառ. Վարժարան 1955 Դեկտ. 25ին 1956 Օգոստ. 25ին ձեռնազրուած է Սարկաւազ. 1956-1959 շարունակած է իր ուսումը Ս. Աթոռոյս Ընծայարանի բաժնին մէջ:

ՍԻՍՆ, յանուն Ս. Յակոբեանց Միաբանութեան, իր ջերմ շնորհաբարութեանց կը միացնէ կարողութեան լաւագոյն մաղթանքներ նորընծային՝ որպէսզի անոր ծառայութիւնը Տիրօջ պիտի չենքս ըլլայ արդիւնաշատ ու բեղմնաւոր: